

Քը ամենեին դաւազրութիւն մը չեղաւ  
( գոստոսի գէմ :

**Հենրիկոս Դ Գաղղիոյ թագաւորը**  
օր մը հարցուց պատանի ԱՌՈՆՄՈՐԱՆՍԻ  
դքսին, թէ թագաւորի մը ո՞րն է լսւա-  
գոյն որպիսութիւնը : “Դուքսը առանց  
մէկ ուշանալու մը՝ պատասխան տուաւ,  
թէ ԳԱԹՈՒԹԻՒՆՆ է : Ա բայ բերաւ թա-  
գաւորը .” Ինչո՞ւ ըլլայ գթութիւնը,  
ու ըլլան քաջութիւնը, առատասրտու-  
թիւնը և ուրիշ այնչափ առաքինու-  
թիւններ՝ որ թագաւոր մը պիտի ունե-  
նայ ., : Պատասխան տուաւ դուքսը .  
“Ա ասն զի միայն թագաւորներուն կ'իյ-  
նայ թողութիւն տալը կամ յանցանքը  
պատժելը աս աշխարհքիս մէջը ., : Ինքը  
լաւ իմացած էր հաստատուն փառքին  
գաղափարը, ու նոյն ատենը կ'արդարա-  
ցընէր Հենրիկոս Դ բնաւորութիւնը,  
որ իրեն հպատակներուն թէ յաղթող,  
և թէ հայր եղաւ : — Ի՞նքամ մը իմա-  
ցուեցաւ որ իր սիրելի իշխաններուն մէ-  
կը ծածուկ միաբանութիւն ըրեր էր  
իրեն թշնամիներուն հետը . բայց աս  
թագաւորին բարութիւնը ազատեց յան-  
ցաւորը . ու կանչեց ըստ անոր բարե-  
կամներուն .” Ահա ան սիրելի իշխանը՝  
որ այսպիսի անմտութիւն երազեց ինձի  
գէմ. կը ներեմանոր ձեր սիրոյն համար,  
բայց ան դաշամբ՝ որ դուք հրապարա-  
կաւ յանդիմանութիւն մը տաք անոր ., :

**Կարդինալ Անդր կ'ըսէր Լ ուղովի-**  
կոս ՃԳԻՆ .” ԳԱԹՈՒԹԻՒՆՆ է օգտաւէտ  
առաքինութիւնը մեծ իշխաններուն . ի-  
րենց մեծ յաղթանակներուն մէջը կը  
փառաւորուին՝ ուրիշն ցաւակից ըլլա-  
լովին : Կըբոր ճամբայ կ'ընես քու գա-  
ւագներուդ մէջ, պիտի նմանիս ան  
գետերուն որ ամէն տեղ առատութիւն  
կը թողուն : Չըլլայ թէ քու անցնիլդ  
նմանի ան սահանքներուն, որոնց ջրե-  
րուն սաստիկ վազելները՝ ամէն բան  
կ'աւրեն ու կ'ապականեն :

## ՀԱՅԱՍԻՐԱԿԱՆ

### ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Լուղովիկոս ՃԶին վարքն ու մահը <sup>1</sup>:

**Դարձեալ երբոր թագուհին ցորեկ**  
մը, ըստ սովորականին Խղիսաթեթ խա-  
թունին խուցը կ'երթար առտուան ըզ-  
գեստները հանելու համար, պահա-  
պաններէն մէկը ուզեց հետը երթալ.  
Ես աս բանիս անվայելցութիւնը ցըցու-  
ցի . բայց անօգուտ տեղը, և հարկ ե-  
ղաւ որ թագուհին խուցէն ելլէ :

Կըբոր ես մաքուր լուացքները կ'առ-  
նեի, պաշտօնականները բոլորն ալ մէկիկ  
մէկիկ բանալ կուտային, և լսւ մը կը  
քննէին : Լ ուացարարին հաշուին տե-  
տրակը, և ան թղթերը որոնց մէջն որ  
զգեստները կը պլէին՝ կ'այրէին, վախ-  
նալով որ ըլլայ թէ ծածուկ զրուածք-  
ներ բովանդակիեն :

**Յայտնի է որ աս պաշտօնեից մէջը**  
կային ոմննք ալ որ աւելի բարի և մար-  
դասէր կերպ մը ունեին, բայց անոնց  
մեծ մասը Հասարակաց փրկութեան  
ըսուած դատաւորներուն ազքին կաս-  
կածաւոր երենալով՝ մահուան դատա-  
պարաւուեցան, և շատերն ալ բանտերու  
մէջ փոտեցան :

**Դաւլան անունով երիտասարդ մը,**  
որ իր խօսակցութենէն թագաւորական  
ընտանեաց մեծ թշնամիններէն մէկը կ'ե-  
րեւար, օր մը մօտիկցաւ քովս ու ձեռքս  
սիմելով նշանական կերպով մը ըստ  
ինձի .” Ըեմկընար այսօր թագուհոյն  
հետ խօսիլ . բայց ըսէ իրեն որ իր յանձ  
նարարութիւնը կատարուեցաւ, և երբ-  
որ քանի մը օրէն պահապանութեան  
կարգը ինձի գալու ըլլայ նէ, իր ուզա-  
ծին պատասխանը կու տամ ., : Այս խօ-

<sup>1</sup> Տես. Հայ. ԺԳ. Երես 329. Հայ. ԺԳ. Եր. 170, 240, 320, 368. Հայ. ԺԵ. Եր. 7. 46. 123, 156. 187:

սակցութեանս սաստիկ զարմանքս եւ կաւ, և վախնալով որ խաբե՛ռ թիւն մը չըլայ, ըսի իրեն. “Պարոն, հրամանքդ կը սխալիս անանկ խօսքեր ինծի զուրցելով: — Չէ, չեմ սխալիր . . . , կրկնեց ինքը, և առջինէն աւելի ուժով ձեռքս սխմելով, ելաւ գնաց: Այս դիպուածս թագուհւոյն պատմեցի, որն որ ըստ ինծի թէ Դուլանին վրայ կրնամվատահիւ: Երբոր զթագուհին քննեցին, աս պատանին ալ՝ ուրիշ ինը ընկերներովը մէկտեղ, ամբաստանուեցան իբրև թէ կ'ուզէին թագուհին փախցընել իր աշտարակը եղած միջոցը, և խեղձը մահուան դատապարտուեցաւ:

Վանի մը օրէն վերջը, թագաւորը սաստիկ իջուածք մը ունեցաւ: Այս շատ ջանացի որ Պ. Տիւպուան գայ՝ որ թագաւորին ակուայ հանողն էր. աս բանս ժողովքի հանեցին, և իրեք օր ուշացընելէն վերջը մերժեցին խնդիրը: Աջուածքին վրայ ջերմն ալ աւելցաւ, և հազիւ ան ատեն հրաման տուին որ Պ. Ա-Ընիէն, որ թագաւորին առջի բը ժիշկն էր գայ. չեմ կրնար ըսել թէ ինչ աստիճանի ցաւեցաւ այն ծերը իր տէրը տեսնելով:

Թագուհին և իր որդին միշտ թագաւորին հետն էին ամբողջ օրը. ինծի հետ կը ծառայէին իրեն, և շատ անգամ կ'օգնէին ինծի իր անկողինը շտկելու: Կիշերները միայն ես թագաւորին քով կը կենայի. Պ. Ա-Ընիէն օրը երկու անգամ կուգար, խել մը պահապաններ ալ հետը, որոնք խեղձին վրան լաւ մը զննելէն ետքը, կը ստիպէին որ միշտ բարձր ձայնով խօսի: ( )ը մը թագաւորը մասնաւոր դեղ առած ըլլալով, Պ. Ա-Ընիէն խնդրեց որ մէկ քանի ժամ քովը կարենայ կենալ. աս միջոցին որովհետեւ ինքը ոտքի վրայ կեցեր էր, ու պահապանները զլուխնին գոցածնստեր էին, թագաւորը ըստ որ ինքն ալ նստի, բայց ինքը քաշուելով յանձն շառաւ. իսկ պահապանները սկսան մը ըմբռալ: Թագաւորին հիւանդութիւնը 10 օր քշեց:

• Բիշ օր վերջը, թագաժառանգը որ

թագաւորին խուցը կը պառկէր, և հրաման չունէր թագուհւոյն քովն երթալու, ջերմունեցաւ: Թագուհւոյն սիրտը սաստիկ անհանգիստ եղաւ, վասն զի ամենայն կերպով աղաչելէն ետքն ալ թող չտուին որ կարենայ զիշերները զննեալ իր որդւոյն քովն անցընել: Այց իր մայրենի գթած սիրտը գոհ կ'ըլլար ու կը միսիթարուէր այն քիչ մը ատեն որդւոյն քովը կենալովը: Այն հիւանդութիւնը նաև թագուհւոյն, թագաւորական օրիորդին և Կղիսաբեթ խաթունին ալ անցաւ: Պ. Ա-Ընիէն հրաման ունեցաւ իր այցելութիւնները շարունակելու:

Այս հիւանդութիւնը ինծի ալ անցաւ, իմ խուցս խոնաւ և առանց կրակարանի էր. պատուհանին երկաթները օդին ազատ մնութքը կ'արգիլէին: Հարբիսային ջերմէ մը բռնուեցայ հանդերձ զլխացաւով, որ զիս ստիպեց անկողին կենալ:

Այսի օրը ելայ որ թագաւորը հագուեցընեմ. բայց զիս այնպէս տկար տեսնելով՝ չթողուց և հրաման որ նորէն անկողին մտնամ: Այւ ինքը անձամբ իր որդւոյն ծառայութիւնները ըրաւ:

Թագաժառանգը գրեթէ ամբողջ օրը իմ հետս կեցաւ, և ինքը իր ձեռքովը ինծի կու տար ըմպելիքս: Թագաւորը իրիկուան յարմար ատեն մը գտնալով, որ պահապաններէն չտեսնուի, իմ քովս եկաւ, և գաւաթը դեղով լեցուցած տուաւ որ խմեմ, ըսելով. “Առջէի անձամբ քեզի ծառայել. բայց գիտես թէ ինչ աստիճանի պահապանութեան տակ ենք. զօրացիր, վաղը իմ բժիշկս կու գայ . . . : Ինթըիքի միջոց թագաւորական ընտանիքը խուցս եկաւ, և Կղիսաբեթ խաթունը Լու ըսուած ըմպելիքով լեցուն շիշ մը տուաւ. և թէպէտ ինքն ալ հարբուխ ունէր, բայց զինքը չհոգալով ինծի շնորհեց: Այս չուզեցի առնել, բայց վերջը զիջայ: Կերակուրէն վերջը թագուհին անկողին պառկեցուց պղտի իշխանը, և Կղիսաբեթ խաթունը թագաւորին մազերը խոպոպեց: Առտուանց Պ. Ա-Ընիէն ա-

պըսպրեց ինծի որ արիւն առնել տամ. բայց աս բանիս համար ալ խորհրդա. բանին հաւանութիւնը պէտք էր՝ որ վի. րաբուժ մը կարենար Տաճարը մտնալ. մտածեցին որ զիս Տաճարին պալատը տանին, բայց ես վախնալով որ մէյմը աշտարակէն դուրս ելլալէս վերջը չէի կրնար նորէն ներս մտնալ, չուզեցի որ արիւն առնեն, հապա ինքզինքս աղէկ. ցած ձեւացուցի. և որովհետեւ իրիկունն ալ ուրիշ նոր պահապաններ եկան, ա. սով փոխադրութեանս վրայ ուրիշ խօսք մը չեղաւ :

Դիւրձի հրաման ինդրեց որ գիշեր. ները իմ քովս անցընէ, որուն հաւանե. ցան իր ընկերները, և իրենք ալ փոխն 'ի փոխ ինծի կը ծառայէին : Ա եց օր ան. կողին պառկեցայ, և ամէն օր թագա. ւորական ընտանիքը ինծի այցելութեան կու գար : Աղիսաբեթ խաթունը ինծի դեղեր կը բերէր, զորոնք իբրև իրեն հա. մար ուրիշներէն կը ծարէր : Այսպիսի ազնուական կերպերով զիս մէկէն 'ի մէկ առողջացուցին և ունեցած հիւանդու. թենէս ուրիշ հետք մը չմնաց վրաս, բայց եթէ խորունկ երախտագիտու. թենէս ապարտք մը միայն : Այս որուն սիր. տը չէր շարժեր արդեօք տեսնալով այն. պիսի արքունական փառաւոր ընտանիք մը՝ որ իրենց գլխուն հանդիպած այն. չափ դժբաղդութիւնները. մոռնալով ծառայի մը վրայ այնչափ հոգ կը տա. նէին :

Պէտք է հոս թագաժառանգին վր. րայ մէկ դիպուած մը պատմեմ, ցուցը. նելու համար, թէ ինչ ազնիւ սիրտ ու. նէր, և թէ որչափ օգուտ կը քաղէր բարի օրինակներէ, զորոնք միշտ աչքին առջեր ունէր :

Իրիկուն մը երբոր ես զինքը անկողին պառկեցուցի, թագուհին ու իշխանու. հիները իրեն բարի գիշեր ըսելու եկան . Ես հոնկից քաշուեցայ իրենց տեղ տալու համար : Աղիսաբեթ խաթունը, որուն հետ պահապաններուն դիմացը չէի կը. նար խօսիլ, խելք բանեցուցեր էր տուփ մը յանձնելու իրեն որ ինծի տայ, որուն մէջ իտեւագուանայ դեղը կար : Այս տուփս

տալերնէն վերջը իշխանուհիները իրենց խուցը գացին, թագաւորը իր ներքին սենեակը մտաւ, և ես ալ սեղանի գա. ցի : Ա են ատենները թագաւորին խու. ցը մտայ իրեն անկողինը շտկելու հա. մար . հոն միայն էի, ու յանկարծ թա. գաժառանգը կամաց ձայնով մը զիս կան. չեց : Օ արմացայ, երբոր տեսայ որ ար. թուն էր, և կարծելով որ հիւանդ է, հարցուցի թէ ինչ կ'ուզէ . ինքը ըսաւ, թէ հօրաքոյրս ինծի տուփ մը տուաւ որ քեզի տամ, և չուզեցի քնանալ քեզի տալէս առաջ . աղէկ ատեն եկար, վասն զի արդէն աչքերս գոցուելու վրայ էին : Այս երբոր ըսեցի, լալս եկաւ . ինքն ալ տեսաւ և ձեռքս սխմելով, երկու վայրկեանէն վերջը քունը տարաւ :

Լոյնպէս աս հետևեալ դիպուածն ալ իր սրտին ազնուութեանը ուրիշ յայտնի նշան մըն է : ( )ը մը դարբին մը եկած էր, ու նախասենեակին դրան բանալին փոխելով աւելի խոշոր մը դնե. լու կ'աշխատէր : Ասիկայ նախաճաշիկ ընելու համար աշխատութենէն դա. զրած ըլլալով, իշխանիկը ձեռքն առաւ գործիքները և սկսաւ խաղալ : Ծա. գաւորը տղուն ձեռքէն ուրագը առնե. լով սորվեցուց թէ ինչպէս պէտք էր գործածել, և քիչ մը ատեն աշխատե. ցաւ : Դարբինը աս տեսնելով՝ սիրտը ելած ըսաւ թագաւորին . Այրբոր աշ. տարակէն դուրս ելլաս՝ կրնաս ըսել որ բանտիդ շինութեանը համար ալ աշ. խատեցար : — Ա պատասխանեց թա. գաւորը, երբ և ինչպէս պիտի ելլամ ես ասկից . . . : Աս խօսքիս թագաժառան. գին սիրտը շարժելով սկսաւ լալ . և թա. գաւորն ալ ձեռքէն վար ձգելով գոր. ծիքները, խուցը մտաւ արագ արագ քալելով :

Աեպտեմբերի 25 օգոստոսի 10<sup>th</sup> ե. կած քաղաքական պաշտօնեաները փո. խուեցան, և անոնց տեղը եկան ուրիշ նոր պաշտօնեաներ՝ որոնք առ ժամանա. կեայ կը կոչուէին . կը յուսայի որ աս նոր եկողները զացողներէն աւելի լաւ ըլլան, որով և քանի մը աղէկ փոփո. խութիւններ ըլլան բանտին կառավա.

ըութեանը մէջ . բայց յօյսս պարապ ելաւ . վասն զի աս նոր եկողներէն շատերը իրենց նախորդներուն ողորմիս հանել կուտային : Ի՞այց աս օգուտս ունեցայ որ բերներնէն ուզածս կրնայի առնել և իմանալ՝ իրենց կոշտութեանը պատճառաւ : Եյւ որպէս զի որոշ գաղափար մը առնեմիրենց վրայ , սկսայ դիտել բնաւորութիւննին և վարուելու կերպերնին : Այս ջիւնները աւելի խրոխտ , բայց ասոնք ալ աւելի չար էին : Ինչուան ան ատեն թագաւորն և թագուհին մէյմէկ պահապան միայն ունէին . բայց ասոնք որոշեցին որ իւրաքանչիւրին քով երկերկու պահապան ըլլայ , անոր համար աս բանէս վերջը ինծի համար շատ դժուար էր թագաւորին և իշխանուհեաց հետ խօսիլ . ասկէց զատ նաև խորհրդարանն ալ որ ինչուան նոյն ատեն Աշտարակին պալատին սրահներէն մէկուն մէջ կը գումարուէր , անկէ ետեւ աշտարակին մէջ սկսաւ գումարուիլ : Այս պաշտօնեաները իրենց նախորդները անցնիլ կ'ուզէին ջանքով և եռանդեամբ , և ասիկայ բըռնաւորութեան գրգիռ մը եղաւ իրենց :

Դեկտեմբերի 7ին քաղաքական պաշտօնեայ մը եկաւ Հասարակաց պատգամաւորութեան գլուխ կեցած , և հրովարտակ մը կարդաց թագաւորին . որուն մէջ կը հրամայուէր որ իրենց քով եղած դանակ , ածելի , զմելին և ասոնց նման ուրիշ կտրելու գործիքները բոլոր ժողվուին , ինչպէս որ կ'ընեն անզգամ և իրօք յանցաւոր եղած բանտարգեալներուն , խիստ և մանրամասն խուզարկութիւն մը ընելով իրենց բնակարանին մէջ : Պաշտօնեայն դողդոջուն ձայնով մը կարդաց , որով կ'իմացուէր թէ չուզելով կ'ընէր աս բանս . և իրօք վերջը արդեամբ ալ ցըցուց որ թագաւորին օգնելու համար միայն աս պաշտօնս յանձն առեր էր :

Թագաւորը հանեց գրապանէն կտրոց մը , զմելին մը և մկրատ մը և տուաւ իրենց : Պաշտօնեաները մանրամասնաբար ամէն տեղ նայեցան , և առին ածելիները , մազ շտկելու գործիքները ,

և ուրիշ ասոնց նման պղտի մղտի ոսկիէ ու արծըթէ գործիքները : Կոյնպէս վըրաս ու իմ խուցս ալ ամէն տեղ նայեցան : Ինձմէ վերջը պաշտօնեաները թագուհոյն և իշխանուհեաց բնակարանը գացին , ու անոնց քովն ալ նոյն հրամանը կարդալով իրենց քովին ալ առին ամէն տեսակ գործիք , ինչուան աշխատելու համար հարկաւոր եղած ամենէն չնչին գործիքներն ալ : Այսկէ ժամանակ վերջը , զիս խորհրդարանի խուցը կանչեցին , և հարցուցին թէ արդեօք ուրիշ բան ալ կայ այն պահարանին մէջ որ թագաւորը ծոցը դրաւ : “ Ի՞եզի կ'ապսպրեմ որ աս իրիկուն պահարանը քովին առնես , , , ըստ Այրմէ անունով պաշտօնեայ մը : ” Ինծի չիյնար , ըսի ես , որ հասարակութեան տուած հրամանը կատարեմ , և ոչ թագաւորին գըրպանը քննելու : Անդիէն մէկ ուրիշ մը դարձաւ ըստ : ” Այսոր մէջ Վկերի իրաւունք ունի , փնտուելը քու պարտքդ էր , , :

Իսոլոր թագաւորական ընտանիքէն առած բաները ցուցակի վրայ առին և թուղթերու մէջ պլելէն վերջը , կնքեցին : Ա երջը ստիպեցին զիս որ հրովարտակին տակը անունս ստորագրեմ , որով պարտը կան ըլլամ եթէ թագաւորին կամ իշխանուհեաց ձեռքը և կամ իրենց խուցը կտրոց մը կամ ուրիշ գործիք մը տեսնամ , մէկէն խորհրդարանին իմացընեմ : Այս ամէն բաներս ընելէն ետքը ամէն բան խորհրդարանին խաւրեցին :

Ուէ որ դիտէ մէկը Հաճարի խորհրդարանին արձանագրութիւնները , անշուշտ կը տեսնայ որ շատ անգամիմ անունս ալ այլ և այլ հրովարտակներու տակ գրուած է , որոնց որ ես մաս մը չունէի , և ինչ որ ալ ըրի՝ միշտ թագաւորին և թագուհոյն հրամանովը կ'ընէի : Ա ասն զի թէ որ քիչ մը դէմ կենայի , բոլորովին զիս թագաւորին քովին կը հեռացընէին , որոնց համար բոլոր ես ինքզինքս զոհեր էի : Այլ և այլ հրովարտակներու ստորագրելու միջոցս ուրիշ բան չէի մտածեր , բայց թէ ինձի հաղորդուած են ան հրամանները :

Ե՞ս վերի ըստ Անդրեած Անդրեած պաշտօնեան զիս վերջը թագաւորին խուցը տարաւ : Ծագաւորը հոն կրակին մօտ ունելիքը ձեռքը կեցեր էր . Անդրեած ուզեց իրմէ , խորհրդարանին կողմանէ , ինչ որ դեռ պահարանին մէջ կրնար ըլլալ . թագաւորը ծոցէն դուրս հանեց և բացաւ . մէջը պտուտակահան մը և հրահան մը միայն կար . Անդրեած զանոնք նորէն մէջը դնել տուաւ : “ Աւրեմն աս ունելիքն ալ որ ձեռքս բռներ եմ , կտրելու գործիք չէ ” , ըստ թագաւորը անդին դառնալով : Խրբոր գնաց Անդրեած , ես ժամանակ ունեցայ թագաւորին պատմելու , ինչ որ իմերկրորդ քննութեանս միջոց խորհրդին մէջ հանդիպեր էր :

Խրբոր կերակուրի միջոցը հասաւ , ոստիկաններուն մէջ վիճաբանութիւն մը ծագեցաւ : Ամանք կ'ուզէին որ թագաւորական ընտանիքը սեղանի միջոց պատառաքաղ և դանակ գործածեն , ոմանք ալ միայն պատառաքաղ կ'ըսէին . բայց վերջապէս որոշեցին որ ուրիշ փոփոխութիւն մը չըլլայ , միայն թէ կերակուրէն վերջը մէկէն ձեռքերնէն առնուին :

Ե՞ս ամէն գործիքները առնելնին խիստ ծանր եկաւ իշխանուհեաց , ես առաւել որ չէին կրնար իրենց աշխատութիւնները առաջ տանիլ , որոնցմով իրենց բանտարգելութեան երկայն օրերուն մէջ կը զբաղէին : ( )ը մը Խղիսաբեթ խաթունը թագաւորին զգեստները կը կարէր , և մկրատ չունենալով , դերձանը ակռայով կը կտրէր : Ծագաւորը որ հոն կեցած գթութեամբ մը կը նայէր , դարձաւ ըստ . “ Ի՞նչ տարբերութիւն , բան մը չէր պակսեր ձեզի ձեր Անդրեածի գեղեցիկ տանը մէջ . — Ե՞ս , եղբայր իմ , պատասխանեց խաթունը , ինծի համար ասկէ աւելի մեծ միխթարութիւն մը աշխարհիս վրայ չիկրնար ըլլալ որ քու վիշտերդ կարենամ թեթեցընել ” :

Բայց օրէ օր նոր հրովարտակներ կը հանեին խոռվարաները , և իրենց բռնաւորական լուծը կը ծանրացընեին : Վաղաքական պաշտօնեաները խելքէ

դուրս խիստ և դառն կերպով մը կը վարուեին հետս : Դարձեալ արգիլեցին ինծի որ ան իրեք ծառաներուն հետ շխօսիմ , և յայտնի կը տեսնուեր որ բանը գէշնալու վրայ է : Ծագուհին և Խղիսաբեթ խաթունն ալ առ բանս իմացան , և շարունակ ինծի եղած լուրերը կը հարցընէին , բայց չէի կրնար ըսել իրենց բան մը , և անհամբերութեամբ կնոջս գալուն կը սպասէի , որ իրեք օրէն ետքը պիտի գար : Անդապէս հինգշաբեթի օրը ամուսինս եկաւ և զիս խորհրդարանի խուցը կանչեցին . բայց որպէս զի պահապանները բնաւ կասկածի մը չերթան , բարձր ձայնով կը խօսէր մեր տնական բաներուն վրայ . և իր խօսելուն միջոց , միւս բարեկամ խաթունը որ միշտ հետը կու գար , ըստ ինծի ցած ձայնով . “ Ծագաւորը երեքշաբեթի օրը խորհրդարանը պիտի երթայ . զինքը սկսին պիտի քննել , և թագաւորը կրնայ իրեն համար փաստաբան մը ընտրել . տարակոյս մը չկայ աս ըստիս ” :

Չէի գիտեր թէ ինչ կերպ բանեցընեմ , ուղղակի աս սարսափելի լուրը թագաւորին յայտնելու համար . կ'ուզէի առաջ թագուհւոյն և Խղիսաբեթ խաթունին յայտնել , որով մեծ շփոթութեան մէջ էի : Կորսընցընելու ատեն չկար . վասն զի թագաւորն ալ ապսպրեր էր ինծի որ ամէն բան իրեն իմացընեմ : Բայց իրիկունը զգեստները հանելու օգնելու ատենս , ամէն բան պատմեցի իրեն , և իմացուցի որ դատաստանին ատենը կրնար ըլլալ որ զինքը իր ընտանիքէն ալ բաժնեն , և թէ չորս օրէն աւելի ժամանակ չուներ թագուհւոյն հետ մտածելու , և յարմարցընելու թէ ինչ կերպով կրնար հետը վերաբերութիւն ունենալ . և թէ ամէն վտանգ յանձն առած եմ ամէն բան իրարուհաղորդելու . բայց յանկարծ պահապան մը ներս մտնալով չթողուց որ խօսակցութիւնս շարունակեմ . և թագաւորն ալ պատասխան չկրցաւ տալ :

